Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆՆ ԸՆՏՐՎԵՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Մայիսի 3-4-ը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ թեմական տարեկան 76-րդ ժողովը, որի ընթացքում պատգամավորների մեծամասնության քվեով նոր թեմակալ առաջնորդ ընտրվեց Հայ Եկեղեցու Կանադայի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: Որպես Արևմտյան թեմի թվով 8-րդ թեմակալ առաջնորդ, Հովնան Սրբազանը հաջորդում է Գերշ. Տ. Վահե արքեպս. Հովսեփյանին, որն իր 32-ամյա նվիրյալ ծառայությունից հետո կոչվել է հանգստի:

Մայիսի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական գրով օրհնեց և պաշտոնապես հաստատեց նոր թեմակալ առաջնորդի ընտրությունը:

Մայիսի 11-ին Փասադենայի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցում Գերշ. Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը մատուցեց առաջին Ս. Պատարագը՝ որպես թեմակալ առաջնորդ:

Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Ծնվել է 1957 թ. դեկտեմբերի 1-ին Բեյրութում (ավազանի անունը՝ Վահրամ):

Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի «Քառասնից մանկանց» վարժարանում:

1970-1975 թթ. սովորել է Անթիլիասի դպրեվանքում և ավարտել Ժառանգավորաց վարժարանի հնգամյա շրջանը:

1976 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան: 1980 թ. ավարտել է ճեմարանը՝ պաշտպանելով ավարտաճառ՝ «Վրթանես Քերթող» թեմայով:

1978 թ. ձեռնադրվել է սարկավագ:

1980 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

1980-1983 թթ. ուսանել է Օքսֆորդի համալսարանում (Անգլիա) և ստացել Աստվածաբանության գծով բակալավրի աստիճան: Վերադառնալով Մայր Աթոռ՝ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում դասավանդել է Հայ Եկեղեցու պատմություն, Ընդհանրական Եկեղեցու պատմություն և եկեղեցական երաժշտություն: Դասավանդմանը զուգահեռ պաշտպանել է վարդապետական թեզ՝«Եկեղեցական տոների ուղեցույց» («Տոնապատճառ») թեմայով:

1984 թ. նշանակվել է Կանադայի Տորոնտո քաղաքի հոգևոր հովիվ:

1987 թ. Օքսֆորդի համալսարանում ստացել է Աստվածաբանության մագիստրոսի աստիճան:

1989 թ. ստացել է ծայրագույն վարդապետության տասը աստիճաններ՝ պաշտպանելով թեզ «Հովվական աստվածաբանության գործնական ձեռնարկ» թեմայով:

1990 թ. մայիսի 25-26-ին Օնտարիոյի Ս. Կատարինե եկեղեցում հրավիրված թեմական պատգամավորական ժողովի կողմից ընտրվել է Կանադայի հայոց թեմի առաջնորդ (այս պաշտոնում վերընտրվել է 1995 և 2000 թվականներին):

1990 թ. Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռամբ Վազգեն Առաջինի, ձեռնադրվել է եպիսկոպոս:

1993 թ. արժանացել է արքության պատվի:

2000 թ. առաջնորդությանը համատեղ նշանակվել է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի եկեղեցական գրասենյակի վարիչ-տնօրեն:

Նույն թվականից Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ է:

Հովնան արքեպս. Տերտերյանը հեղինակ է բազմաթիվ գրքերի ու հոդվածների:

2003 թ. մայիսի 3-ին Բըրբենքում (Կալիֆոռնիա) հրավիրված 76-րդ թեմական ժողովի պատգամավորների մեծամասնության քվեով ընտրվել է Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևմտյան թեմի թեմական առաջնորդ: